



Տարեկան զինը 10 բուրլի, կես տարվանը 6 բուր.
Առանձին համարները 7 կոպեկով.
Փոփոխում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ Է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունուի է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ
Տ Է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Աւագ-սարկուսաց վարդան, Արշաւիր և Գարեգին, Գրիգոր և Նիկողայոս, Շուշանիկ, Հովհաննէս և Քաղապէր Տէր-Ղևոնդեանները, սրբի խորին ցաւօր յայտնում են առաջինները իրանց հօր, երկրորդները եղբոր, երրորդները սկսած իր անգործ Մարգարէի, Գեորգի եկեղեցու միաբանի.

Մ Ո Ւ Շ Ե Ղ Ք Ս Ա Ն Ա Յ Տ Է Լ Է Ք Օ Ն Դ Ե Ւ Ո Ն Դ Ե Ա Ն Ի

յանկարծակի մահը: Ամբիջը կը կատարվի ամեն օր, երեկոյեան ժամը 6-ին, Մարտի 11-ին, երեկոյեան 3 1/2 ժամին, զէպի նոյն եկեղեցին, իսկ օծման և թաղման հանդէսը հետեւի օրը: Պատարագը կը սկսվի առաւօտեան 10 ժամին:

ԲՈՒՆԱԳԱՎՈՒԹԻՒՆ

Աղանդական աստիճանը. Հետազոտներ. Ներքին Տեսչութիւն. Արդարագործութիւնը Անդրկովկասում. Նամակ Բաղրից. Ներքին խորհուրդ. Արժ. Արտ. Տեսչութիւն. Վերջին տեղեկութիւններ. Գաղթականութեան զէմ արդէններ. Վերջին յիշատիչ յօդուածը. Արտաքին խորհուրդ. ՍԱԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳՎՈՒՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԹԻՐԵՔԻՅԻ Ֆինանսներ.

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Մեր Անդրկովկասի կից երկրները՝ փոքր Ասիայի և Պարսկաստանի անտեսական պայմանները ազդեցութիւն ունեն և մեր երկրի վրա: Երբ այդ հարեան երկրները երաշխաւորեան և այլ պատճառներով զրկված են լինում հունձից և մեծ պահանջ է լինում հացի և այլ մթերքների, այն ժամանակ թանգանում են այդ առարկաները և մեղանում, որովհետեւ նրանց մի մասը արտահանվում է մեր երկրից զէպի կարօտ կողմերը:

Այս տարի հունձը թէ կըրուծուի, թէ Մուշի և թէ Վանի շրջաններում վատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՐԵՔԻՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, Թիւրքիայի ֆինանսները վերին աստիճանի խախտված են: Այդ ֆինանսները կարգի բերելու համար պէտք է կերպարանաւորեն պետական պարտքը, բայց կարելի է արդեօք ձեռք գործել մի այդպիսի նշանաւոր բարենորոգութեան, երբ Թիւրքիան կորցրել է որ և է կրեդիտ եւրոպական դրամատէրերի մէջ, իսկ նրա հրատարակած արժէթղթերը վաղուց արդէն ոչինչ զին չունեն: Բացի դրանց ֆինանսների կարգաւորումը այնպէս սեւտ կապված է քաղաքական հարցերի հետ, որ միայն այն ժամանակ հնարաւոր կը լինի որ և է լուրջ բարեփոխութիւններ մտցնել այդ շրջանում, երբ եւրոպական գլխաւոր երկրները կատարելապէս միտասեակ չանք կունենան: Այնու առմեհնիւ, ամեն անգամ Թիւրքիայի պարտաւերերի մէջ կազմվում են ծրագրեր, որոնց նըպատակն է այդ երկրի կրեդիտը բարձրացնել:

Որովհետեւ Բ. Դրան հրատարակած բոլոր արժէթղթերի մօտ երկու երրորդը մասը տարածված է Ֆրանսիայում, այդ պատճառով նախաձեռնութիւնը մեծ մասամբ ֆրանսիայի դրամատէրերի կողմից է լինում: Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութիւնը այն համոզմունքը ամրացրեց Ֆրանսիայում, թէ Ռուսաստանը համալրութեամբ կը վերաբերվի Թիւրքիայի ֆինանսները վերականգնելու փորձին: Թիւրքիայի ֆինանսական կազմակերպութեան բարենորոգման նորագոյն ծրագիրը նպատակ ունի միջազգային նոր համաձայնութեամբ տեղի հաստատուն դարձնել այն յանձնաժողովը, որը կառավարում է Բ. Դրան պետական պարտքը և որը բաղկացած է եւրոպական դրամատէրերի ներկայացուցիչներից: Այդ նախագիծը չատ անգամ

չէ. ցանքները բաւարար կերպով աճել են և հունձ տուել: Սակայն վերադարձների մի ստուար մասը ցանքներ չէ արել կամ շատ քիչ հող է մշակել: Յամենայն զէպ, երկրագործական արդիւնների զինը բարձր չէ տեղական վաճառանոցում: Չը նայելով հացի և այլ պիտանքների էժանութեան ժողովրդի նշանաւոր մասը ծայրահեղ կարօտութեան մէջ է և այդ վիճակում էլ կը լինի առաջիկայում, որովհետեւ նա գնելու կարողութիւն չունի: Շնորհիւ արհեստների և վաճառականութեան թուլանալուն պահանջ է փոխանակութեան առարկաների քանակութիւնը և փողը: Մի կողմից վերադաւո ցանքների զէպի կերպով պահանջը, միւս կողմից փոխանակութեան թուլանալը ստեղծել են մի այնպիսի անտեսական դրութիւն, որ ցորենը և վերադաւոնական արդիւնները ամենաէժան գներով անգամ չեն ծախվում, թէև շուրջը պահանջ կայ, որովհետեւ այդ արդիւնները ձեռք բերելու համար փող է պահանջվում, որ չը կայ երկրի մէջ:

Պարսկաստանում հունձը եղել է միջակ

է առաջարկվել, բայց մինչև այժմ չէ իրագործվել: Այժմ Ֆրանսիայում կամենում են նորից փորձ անել գրաւելու եւրոպական պետութիւնները Թիւրքիայի ֆինանսները բարեկարգելու համար: Մի քանիները մինչև անգամ այնտեղն էին հասնում, որ առաջարկում էին Թիւրքիայի եկամուտների ամբողջ վարչութիւնը յանձնել եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներից բաղկացած մի հաստատութեան, նման այն բանի, ինչպէս այդ դործը կազմակերպված է եղել Բուլղարիայում: Սակայն, տեսնելով որ անհնար է ընդունել տալ պետութիւններին այդ նախադիմ, ստիպվեցին աւելի համեստ պահանջներ առաջարկել: Որքան կարելի է դատել լրագրերի տեղեկութիւններից, մտադրութիւն կայ թողնել այժմեան կարգը, որով պետական պարտքերի յանձնաժողովը ուղարկվում են ոչ թէ կառավարութիւնների, այլ պարտաւերների ներկայացուցիչներ Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Աւստրիայից և Իտալիայից, բայց այդ յանձնաժողովը պէտք է ստանայ իրաւաբանական և միջազգային աւելի հաստատուն նշանակութիւն:

Բուն այդ յանձնաժողովը գոյութիւնը, դրա հետ միասին և զանազան երկրների պարտաւերների ներկայացուցիչների մասնակցութիւնը հիմնված է ոչ թէ օրէնքի վրա, այլ 1881 թվականի դեկտեմբերի 8-ին Բ. Դրան հրատարակած հրովարտակի վրա: Այդ հրովարտակի հիման վրա Բ. Դրանը, իր սնանկութիւնը խոտովանելուց յետոյ, յանձնեց պարտքերի վարչութիւնը եւրոպական պարտաւերներին և նրանց տրամադրութեան տակ գրեց մի չարք անուղղակի հարկեր: Այդ հրովարտակը հաղորդեց ի զիտութիւն եւրոպական պետութիւնների, բայց ոչինչ պարտաւորութիւններ չը ստեղծեց Բ. Դրան համար: Այդ հրովարտակի փոխարէն պարտաւերները աշխատում են այժմ այնպիսի օրէնք հրատարակել տալ, որը կընդունվի եւրոպական պետութիւնների կողմից և միջազգային պարտաւորեցուցիչ

և հացի առանձին կարօտութիւն չի զգացվել: Ինչ վերաբերում է Անդրկովկասին, պէտք է ասել, որ մեր երկրի շատ տեղերը զգալի կերպով ֆլաւիլ են կամ զարնան հեղեղներից, կամ յորդ անձրևներից, կամ ընդհակառակն, երկարատեւ երաշուկութիւնից. այնպէս որ մեր երկրի զանազան մասերում կը զգացվի կարօտութիւն և գիւղացիները նոր պարտքերի մէջ կընկնեն: Չը նայելով ձախորդ հանգամանքներին, զիւրաանտեսական արդիւնների գները մեղանում չեն բարձրանում, որովհետեւ Հիւսիսային Ասիայից և Հարաւային Ռուսաստանից ներմուծվում է Անդրկովկաս մեծ քանակութեամբ հաց: Այդպիսով, երկրվաճ ուժի մօտ եղած տեղերը ապահովված կը լինեն էժանապէս հացով, և կարող են ֆլաւիլ միայն մեր երկրի այն անկիւնները, որոնք կարված են կենտրոններից և ուր աղանդների տեղափոխութիւնը դժուար է և մեծ ժամանակ է պահանջում:

Այսպէս է Անդրկովկասի և նրա հարեան երկրների անտեսական վիճակը այս տարի: Յանկալի է, որ տեղական հաստատութիւնները ուշադրութիւն դարձնեն այդ կարևոր խնդրի վրա և նախօրոք հոգային այնպիսի միջոցների ձեռնարկել, որ ժողովրդի սնունդը ապահովված լինէր և նա չընկնէր աւելանալի պարտքերի և թշուառութեան մէջ:

Հ Ե Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Ռուսաց զորքախաւովեան)

Կ. Պ Օ լ ի տ, 15 հոկտեմբերի: Դեսպանների թարգմանների հարցապնդումին Բ. Դուռը անորոշ պատասխան տուեց, ասելով թէ ստիպողական փոխառութիւնը նրա համար է անվում, որ-

բնաւորութիւն կունենայ: Եթէ Բ. Դուռը կը համաձայնվի այդ հրովարտակին օրէնքի ձև տալ, պարտաւերները փաստ կը լինեն, որ իրանց չանքը չեն վտանգվի, որ իրանց ներկայացուցիչները կարող կը լինեն պահպանել յօդուտ իրանց տոկոսները վճարելու համար գրաւ գրված եկամուտները և ուր Բ. Դուռը չի խախտի այդ դաշնագիրը, երբ որ իր ըէֆը կը տայ: Թիւրքիային հետաքրքրելու համար և զրգելու նրան ընդունել այդ բարենորոգումը, պարտաւերները առաջարկում են հրաժարվել 1881 թվ. հրովարտակով նախատեսված պարտքի հանգցման մի մասից: Այդ ձևով, պարտքի հանգցման մի մասի պակասելու պատճառով բիւջէթում ազատ մնացողը կը լինի մօտաւորապէս 300.000 ֆունտ. այդ մնացողը յուսով մտադրութիւն կայ մի քանի միլիոն ֆունտի նոր փոխառութիւն անել և Բ. Դրանը նոր միջոցներ տալ, առանց ծախսերը մեծացնելու, փոխառած գումարների տոկոսները վճարել: Կընդունվի արդեօք այդ նախագիծը — կախված է զլխաւորապէս Ռուսաստանի վերաբերմունքից զէպի այդ հարցը: Ահա թէ ինչու Ֆրանսիայի դրամատէրերը այժմ նոր փորձ են անում պետութիւնների ուշադրութիւնը գրաւել զէպի այդ հարցը: Թէպէտ և Ռուսաստանը, որը պատերազմական վարձատրութեան հաշիւները դեռ չէ վերջացրել, անմիջապէս հետաքրքրված է թիւրքայի ֆինանսական դրութեամբ, այնու ամենայնիւ ուստաց արտաքին գործերի մինիստրութիւնը ոչինչ կապ չունի Թիւրքիայի պետական պարտքի եւրոպական յանձնաժողովի հետ:

Ի հարկէ, ուստաց կառավարութեան մի յայտարարութիւնը բաւական կը լինէր, որ Ռուսաստանի ներկայացուցիչը մուտք ունենար յանձնաժողովի մէջ և զրա հետ միասին կը հեշտանար պետական պարտքի կառավարութեան վերակազմութիւնը միջազգային համաձայնութեան հաղի վրա: Ինչպէս նկատում է «Neue Freie Presse»-ի յօդուածի հեղինակը, որից մենք քա-

պէս զի կարելի լինի լրացնել պատերազմական ոյժերի զինաւորման պակասորդը զիւր տեղերում:

Կ. Պ Օ լ ի տ, 15 հոկտեմբերի: Հայոց պատերաքի տեղապահ Բարթոլոմէոսի վրա, որը կառքով պարտիարքարան էր գնում, յարձակում գործեցին չորս մարդիկ: Յարձակողները, նախ քան կարողացան սպանել նրան, կալանաւորվեցին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԴԱՐԱՆՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԿՎՈՎԿԱՍՈՒՄ

«Մշակը» անցեալ տարի մի քանի տառնորդող յօդուածներ նուիրեց դատաստանական ընթերցանների և Անդրկովկասի դատարանների մէջ թարգմանների միջոցով կատարվող դատավարութեան հարցերին: Այժմ արդարադատութեան մինիստրութեան օրքան «Журнал Министерства Юстиции» ամսագիրը, հոկտեմբերի համարի մէջ ապված յօդուածով քննելով այն հարցը, թէ ինչ պայմանների մէջ է գտնվում արդարադատութեան գործը Անդրկովկասի դատաստանական հաստատութիւնների մէջ, ի միջի այլոց, խօսում է և դատավարութիւնը երկար ձգձկնելու հարցի մասին: Եւ անա ինչ է ասում.

«Մեր կարծիքով, դատարանների մէջ գործերի զանազալ ընթացքի գլխաւոր պատճառներից մէկը այն է, որ ժողովուրդը չը գիտէ ուստաց լեզուն: Անհնար է երեւակայել այն դժուարութիւնը և անյարմարութիւնը, որ զգում են անգլիկական դատաւորները, չը հասկանալով այնտեղի ժողովրդի լեզուն, ուր նրանք պէտք է դատաստան անեն: Դատաւորները միայն այն ժա-

զում ենը վերոյիշեալ փաստերը, Ռուսաստանի, Ֆրանսիայի և միւս պետութիւնների միաբան գործողութիւնները իրաւունք կը տային գալ այն եզրակացութեան, որ ամբողջ Եւրոպայում ղեկավարող գործն հանդիսանում է Թիւրքիայում statu quo պահպանելու ցանկութիւնը:

Որովհետեւ այդ առաջին փորձը չէ, որ եղել է այդ ուղղութեամբ, ուստի դժուար է գուշակել նրա ելքը: Դեռ Բեթլիմի կոնգրէսում առաջարկված էր Թիւրքիայի պետական պարտքերի վաւարութեան համար կազմել յանձնաժողով եւրոպական պետութիւնների պաշտօնական ներկայացուցիչներից: Ֆրանսիական պատուիրակ վաղորդեցուն ապարդիւն ջանքերից յետոյ՝ ըստանալ թիւրքաց պատուիրակից մի քանի զիւրութիւններ պարտաւերների օգտին, խաւիայի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները առաջարկեցին մտցնել արձանագրութեան մէջ, թէ այն պետութիւնների ներկայացուցիչները, որոնք կոնգրէս են ուղարկել իրանց պատուիրակներին, խորհուրդ են տալիս Բ. Դրան կազմել Կ. Պ Օ լ ի տում ֆինանսական յանձնաժողով, մասնագէտներից բաղկացած, որոնք կը նշանակվեն առանձին-առանձին կառավարութիւններից, այդ յանձնաժողովը կը ընեն թիւրքաց ֆոնդերի տէր անձանց պահանջները և այնպիսի միջոցներ կորոնի, որոնք Թիւրքիայի պարտաւերներին բաւարարութիւն կը տան, երկրի ֆինանսական դրութեան համաձայն: Թիւրքիայի ներկայացուցիչը յայտնեց, որ այդ մտքով որ և է գործողութիւն անելու լրագործութիւն չունի: Թէև պարտքի վերակազմութեան հարցը ծագեց դրամատէրերի մէջ և առաջին անգամից քաղաքական բնաւորութիւն չէ կրում, բայց, իրապէս այդ ոչ միայն ֆինանսական, այլ և ամենատառնալիք քաղաքական հարց է, որովհետեւ նրա լուծումը այս կամ այն ուղղութեամբ ցոյց կը տայ եւրոպական պետութիւնների Թիւրքիայի վերաբերմամբ բունտ արհապագա ուղղութիւնը:

մանակ կարող են կանոնաւոր վճիռ արձակել, կանոնաւոր կերպով կշռել և գնահատել մեղադրութիւնն արդարացիոյ կամ ամբաստանող հանգամանքները, երբ գործ ունեն վկաների և մեղադրութիւնների հետ անմիջապէս, երբ նրանք հասկանում են միմեանց: Իսկ եթէ դատաւորները իրանք անձնապէս չեն հասկանում վկաների և մեղադրութիւնների խօսքերը, եթէ նրանք պէտք է գործ ունենան վկաների հետ անդրադէտ և ուստաց լեզուն վատ խմացող թարգմանների միջոցով, ուրեմն ոչ մի դատմանալի բան չը կայ, եթէ դատարանի վճիռների և որոշումների մէջ ներս են սարքում այնպիսի սխալներ, որոնք երբեմն շատ ցատալի հետեանքներ են արտադրում: Արդարադատութեան կանոնաւոր գործադրութիւնը Անդրկովկասում, անսխալ և հասարակական իրիզը գոհացնող վճիռների արձակելը ամբողջովին կախած է թարգմաններից, նրանց բարեխղճութիւնից և այն լեզուն իմանալուց, որով նրանք հաղորդում են վկաների և մեղադրութիւնների խօսքերը: Թարգմանները այդ երկրում ամեն բան են, նրանք հաղորդում են դատաւորներին այն, ինչ որ, այսպէս ասած, համոզմունք է կայացնում դատաւորների մէջ մեղադրութիւնն անմեղութեան կամ մեղաւորութեան մասին: Նրանք ղեկավարում են գրեթէ գործի ամբողջ ընթացքը, նրանցից է կախած այս կամ այն վճիռ արձակելը: Արդարադատութիւնը չէ առեւտր, եթէ նրա գործը աղիւս, փորձառու թարգմանչի հետեւ, և վնասում է, եթէ այդ թարգմանչիները վատ են իմանում իրանց գործը, եթէ նրանք կանգնած չիտակութեան տէր մարդիկ են: Գլխաւորաբար, անդրկովկասեան թարգմանները մեծ մասամբ աչքի են ընկնում այդ վերջին յատկութիւններով: Մենք մի քանի անգամ լսել ենք հասարակական ձայնը, թէ այս ինչ թարգմանը անմեղ մեղադրութիւն կորցրեց, թէ նա անձնիչ կերպով հաղորդեց դատարանին վկաների ցուցմունքները և մեղադրութիւնը քայքայութիւնները, մեզ պատահել է տեսնել մարդկանց, որոնք վրդովւում էին թարգմանի վարմունքից, որը թարգմանում էր վկաների ցուցմունքները այնպէս, որ նրանցից անհետանում էր այն ամենը, ինչ որ կարող էր յանցաւորին մերկացնել:

Այս ամառից բխում է այն մասին, թէ ինչպէս շատ անգամ պատահում են, օրինակ, Քուլմայիի նախագում, այսպիսի դէպքեր, մեղադրութիւնը սկանչեցի, և որ գրեթէ միայն սկանչեցի լեզուն: Նրա հետ դալիս է մի վկայ, նոյնպէս սկանչեցի, որը բացի իր լեզուից, ուրիշ լեզու չը գիտէ: Այն ժամանակ որոնում են մի անձն, որ գիտենայ սկանչեցի լեզուն և թարգմանի, բայց այդ անձն գիտէ միայն սկանչել և աղիւսը լեզուները, ուրեմն պէտք է որոնել մի այլ անձն, որ գիտենայ արեւադերեւ, այդպիսին թէև գտնուում է, բայց նա էլ իմանում է միայն աղիւսը և միմյանք լեզուները, վերջապէս գտնում են մի միմյանք, որ գիտէ և վրացերէն և այն ժամանակ միայն թարգմանը կարողանում է հաղորդել վկայի ցուցմունքը դատարանին այս ձևով: սկանչեցի վկայն յայտնում է աղիւսը, արեւադերեւ—միմյանք լեզուն—թարգման իմերէլին, իսկ վերջինս ուսուցիչ դատարանին:

Այդ բոլոր փաստերը պերճախօս կերպով ապացուցանում են, որ Անդրկովկասում գործող դատաւորները պէտք է ծանօթ լինեն տեղական լեզուներին:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅ

Հոկտեմբերի 14-ին

Համաձայն գործակալ քաջանայի յայտարարութեան ու առանձին ծանուցածքների՝ երէկ, ամսին 13-ին, տեղի ունեցաւ այստեղ ծխականների ժողով: Արտաքաղ կարգի այդ ժողովը զբաղւել էր ծխականների ստուար բազմութեան:

Ժողովի խորհրդածութեան նիւթ դարձող խնդիրներից առաջին տեղը բռնեց քաջանայացուներ ընտրելու եղանակը: Մինչև այժմ տեղական քաջանայներից ընտրելու չեն ընտրվել ծխականներից: Նրանք, ընդհանրապէս, նշանակվել են և նոյն իսկ առանց ծխականների գիտութեան ու համաձայնութեան այս ու այն կողմերից փոխադրվել են այստեղ: Եւ կամ, եթէ հարկ է եղել երբևէ իցէ համախօսականներ կազմել, ստորագրութիւններ ժողովել—այդ կատարվել է աւելի քան անկանոն կերպով: Յաճախ պատահում է տեսնել

անարժան, նոյն իսկ սրիկայի մէկին հարկաւոր ստորագրութիւններ ժողոված՝ դիմել է հոգեօր իշխանութեան՝ քաջանայ ձեռնադրվելու համար: Նոյն իսկ ներկայումս մի քանի անյայտ քաջանայացուներ քայտեղ ճարտկալի համար թերթեր են պատեցնում և ստորագրութիւններ մուրում: Ժողովը ստորին խաւերում միշտ աջողութիւն կարողանում են գտնել, մասնաւոր ու չեն խորշում կեղծիքներից ու ամեն տեսակ խաբւբայութիւններից...

Որպէս զի մի անգամ ընդ միշտ վերջ դրվի կեղծիքների, որ այլ ևս խնամքութիւնը, լեւաթեր իջունս ստորագրելը տեղի չունենայ և մոլթ անկիւններում համախօսականներ չը թխվեն, ժողովը նպատակաւորաբար դատեց, որ այսուհետեւ ընտրութիւններ կայացնեն ընդհանուր ժողովներով միմիայն, որ այլ ևս երբեք, առանց ժողովի, քաջանայացուների թերթեր չը ստորագրեն և ընտրութիւններ չանեն: Ժողովի այս որոշումը հազար բարձրագոյն իշխանութեան լսելի դարձնելու համար երէցիտի Հ. Մեխեքանին ժողովը պարտաւորեցրեց խնդրելու իշխանութեան, որ այսուհետեւ օրինաւոր համարվեն այն համախօսականները, որոնք վաւերացրել են իրենց ընդհանուր ժողովից:

Ժողովի խորհրդածութեան երկրորդ նիւթը դարձաւ թիւրքահայ բաղթականներին պատուարելու խնդրը:

Գաղթականների հոսանք հասել է և այստեղ: Տասնեակ ընտանիքներ թափառում են փողոց է փողոց և մուրաքիանութիւն անում: Օրից օր դալի կերպով նկատելի է դառնում դրանց աւելանալը: Այնպիսով, շատ ժողով ապագայում այստեղ ևս կը կուտակվի գաղթականների մի ստուար բազմութիւն: Տասնեակ ընտանիքներ՝ կանայք, օրիորդներ, երեխաներ անխնամ թափառում են թէ՛ այստեղ, թէ՛ Սև քաղաքում և թէ՛ Բալասանի: Ապակալած միմյանքը անխառնելի վտանգ է ներհնում: Այստեղ, քաղաքում, դրանք գիշերում են «Աղբատանց» կոչված հիմնարկութեան մէջ, մի հիմնարկութեան, որ անտէր է և խայտառակութիւնների բուն... Այդ «Աղբատանց» փոխարկվել է անբարոյականացի: զիչեր չէ անցկենում, որ խայտառակութիւն տեղի չունենայ: Մի երկու դէպքի առիթով արդէն արձանագրութիւն է կազմվել և գործը դատարանի հասել: Ոչ մի կին, ոչ մի օրիորդ ազատ չէ մնում այդտեղ զիչերային արշաւաններից: Շատերից մէկը: Երկու տարի առաջ այդ բարեխնամ աղբատանցի յարկի տակ ուրիշ շատերի թւում գիշերում էր մի խեղճ օրիորդ: Նա որը էր, բընակվում էր իր ազգականուհու հետ: Երբեմնայեւ խեղճ որը չըբում էր տները և մուրում: Նա համեստ էր և վերին առտիճանի ամօթխոյ: Նրա այդ դրութիւնը՝ միայն ֆիզիքական աւրաքի հետ չարժում էր ընդհանուր կարեկցութիւն... Այդ թշուառ որը այժմ մայր է դարձել... անմեղ մանուկին դրկած՝ դարձեալ չըբում, դարձեալ ողորմութիւն է հայցում:

Գաղթականներին այդ միմյանքից ազատելու համար՝ ծխականների ժողովում երկար խորհրդածութիւններից յետոյ՝ որոշվեց երէցիտի պ. Մեխեքանին առ օգնականների՝ ժամանակաւորապէս նպատակաւորաբար խնամք տանելու, նրանց տարաբար վիճակ կարելոյն չալի բարւոքելու մասին: Չայների մեծամասնութեամբ ընտրվեցին հինգ խնամատար օգնականներ, որոնց թւում և մի տիկին:

Թէ ինչ աստիճան նպատակաւորաբար կը լինի դրանց գործը դրած խնամքը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան, սակայն, մեր կարծիքով, այդ գործում մեծ դեր կարող է խաղալ ևս պէտք է խաղալ «Մարդասիրական ընկերութիւնը»: Այդ ապահով և համարեա թէ անգործունէութեան մասնակցած ընկերութիւնը իր կանոնադրութեան 37 յօդուածի հիման վրա կարող է ոչ միայն խնամել, պատուարել այդպիսիներին, այլ և յատուկ հիւանդանոց ունենալ, ձրի տեղեր մատակարարել, բժշկական օգնութիւն հասցնել, անգործներին գործ տալ և այլն և այլն: Ահա բուն մարդասիրութեան ասպարէզը և գործ. թող գոնէ այդ անին...

Ն. Գալեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մինչև այժմ ընդունված կարգի համաձայն, նախագաղթականներ կազմած տարեկան անհնա-

հաւատարմէն հաշիւները՝ իրանց նախադիւրսի դրութեան մասին, ուղղակի ներկայացնում էին Բարձրագոյն բարեհայեցողութեան, որից յետոյ այդ հաշիւները Բարձրագոյն նկատողութիւններով յանձնվում էին միմիայնների կօմիտէին, որ սա հաւաքի զանազան վարչութիւններից տեղեկութիւններ հաշիւների մէջ արծարծված զլխաւոր հարցերի մասին: Այժմ ներքին գործերի միմիայնութիւնը մշակում է մի ծրագիր այդ կարգը փոխելու համար: Այդ ծրագրի համաձայն, նախադիւրսների տարեկան հաշիւները առաջ պէտք է քննվեն միմիայնների կօմիտէում և յետոյ, անհրաժեշտ տեղեկութիւնների և բաղադրութիւնների հետ միասին, ներկայացվեն Բարձրագոյն բարեհայեցողութեան:

Հոկտեմբերի 13-ին, կիրակի օր, կայացաւ Թիֆլիսում ժողովրդական դատախօսութիւններ կազմակերպող յանձնաժողովի անդամների ընդհանուր ժողովը: Յանձնաժողովի ներկայացրած հաշիւից երևաց, ի միջի այլոց, որ նրան չէ աջողվել թոյլտալութիւն ստանալ տեղական լեզուներով էլ դատախօսութիւններ կարգաւել: Անդամներից մէկը ներկայացրել էր հողաբարձու լեւոնովուն մի դատախօսութիւն «Երկրաշարժի մասին», որը նա մտադիր էր կարգաւել հայերէն լեզուով, բայց պ. հողաբարձուն չը թոյլատրեց:

Մի քանի ժամանակ առաջ հրատարակված նոր կարգադրութեան համաձայն, այն անձինք, որոնք ստանում են դրամական ծրարներ պօստից, կարող են պահանջել, որ ծրարը բերվի իրանց տունը, ինչպէս բերում են նամակները: Այդ կարգը արդէն գործադրվում է Ռուսաստանի շատ քաղաքներում և մատակարար կար Թիֆլիսում ևս մտցնելու: Այժմ որոշված է չը մտցնել այդ կարգը Թիֆլիսում, որովհետեւ Թիֆլիսի պօստ-հեռագրական վարչութիւնը երկու է կրում, որ նամակատարները կարող են կողոպտվել Թիֆլիսի փողոցներում:

Ոչ միայն Կովկասի և Անդրկովկասի, այլ և Ռուսաստանի շատ գաւառական քաղաքներում, նոյն իսկ նշանաւոր կենտրոններում չը կան պետական և մասնաւոր կրէդիտային հաստատութիւններ—բանկեր և բանկային գրասենյակներ: Այդ պատճառով գաւառներում փող դանելը որ և է ձեռնարկութեան համար շատ դժուար է և ազգաբնակիւնը ստիպված է լինում դիմել վաշխատուններին: Սակայն գրեթէ ամեն գաւառական քաղաքում և նոյն իսկ մեծ աւաններում կան գաւառական զանաւարտներ, որոնք շատ հեշտութեամբ կարող են մի և նոյն ժամանակ բանկային և կրէդիտային գործողութիւններ կատարել և զբաղւել միմիայն առ ազգաբնակիւնի հետ և փան օտկոսով կրէդիտ ունենալու: Այժմ ֆինանսների միմիայնութիւնը հրատարակել է մի շրջաբերական, որից երևում է, որ առաջիկայ 1897 թվի յունվարի 1-ից զանաւարտները պէտք է կատարեն և մի քանի բանկային գործողութիւններ, այն է՝ դրամ փոխել, տոկոսաբեր արժեթղթեր գնել և վաճառել, տիրած ընկած արժեթղթերի գրամաւելու և օլը վճարել, դրամ փոխ տալ տոկոսաբեր թղթերի գրամաւելու, դրամ փոխադրել, աւանդ ընդունել և այլն: Չէ թոյլատրված միայն մուրհակով փող տալ և մուրհակները զեղջել: Անկասկած այդ նոր, թէև սահմանափակ կարգադրութիւնը, մեծ զարկ կը տայ գաւառական ազգաբնակիւնի առեւտրական և արդիւնաբերական զարգացման:

Երեքշաբթի, ամսին 15-ին, երեկոյեան 5 ժամին, Կաթնատեսական ցուցահանդէսում Ա. Քալանթար կարգաց իր հինգերորդ և վերջին դատախօսութիւնը, որից յետոյ Գիւղարատեսական ընկերութեան պատաւօր անդամ վ. Գեկիսկի յայտարարեց հետեւեալ պարզեցները. —տիկ մեզա՛ Նիդիդերին՝ չվեցարական պանրի և իւղի համար: Մեծ արծաթեալ մեղանր՝ Գեորդ Շադինեանին՝ կարագ իւղի և պանիրների զանազան տեսակների համար: Ալեքսանդրհիֆ գերմանական գիւղի համայնքին՝ չվեցարական պանրի համար. փոքր-արծաթեալ մեղանր՝ Հինհարդ և Մաթէոսեան ընկերութեան՝ չվեցարական պանրի համար, Նովոսելցովին՝ կարագ իւղի համար և տիկին Կորոնային՝ քեֆիրի համար: Բրոնզի մեղանր՝ Գասաեվին և Շափիկէ-

րին՝ չվեցարական պանիրների համար, Տօմիկին և Շելեկին՝ կարագ իւղի համար, Յովսէփիանցին, Կատամեանցին և Թորոսեանցին՝ տեղական պանիրների համար: Գովաւանական թերթեր՝ Կեղեկին և Գօպիւրգրաֆին՝ չվեցարական պանրի համար, բարօն Կուչենքախին՝ հալած իւղի համար և անյայտ մնացած Մ. Պ. պարոնին: Գովաւանական թերթ՝ Յ. Մէլիք-Բախտամեանցին՝ Թիֆլիս քաղաքին մաքուր կաթ մատակարարելու համար: Բացի այդ, ընկերութեան խորհուրդը, աչքի առաջ ունենալով Գ. Շադինեանին ընդհանուր գործունէութիւնը կաթնատեսական առարկիցում, մտադիր է առանձին որոշում կայացնել ապագայում:

Հայոց Բարեգործական ընկերութեան Երևանի ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տղադրել հետեւեալը. «Թիւրքաց Հայաստանի Բաղէշ (Բիթլիս) քաղաքացի պանդուխտ Ամիրջան Ժամհարեան Միլիթայեանց—68 տարեկան, որ նորերս եկել էր Եւֆրատ օրական պայէն հայթայիկութեան հոկտեմբերի 9-ին վախճանվեց թողբեր բորբոքումից և պատշաճաւոր կարգով թաղվեց Եւֆրատ հայոց գերեզմանատանը: Անհրաժեշտ էմ համարում յայտնելու վերայիշեալը հանգուցեալի հեռաւոր ազգականներին և բարեկամներին, որոնք և տեղեկութիւններ տաւալու համար կարող են դիմել ինձ»:

Եւֆրատի քաղաքի գործակալ Տաճատ քաջանայ Մարաղեանց խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Թիւրքաց Հայաստանի Բաղէշ (Բիթլիս) քաղաքացի պանդուխտ Ամիրջան Ժամհարեան Միլիթայեանց—68 տարեկան, որ նորերս եկել էր Եւֆրատ օրական պայէն հայթայիկութեան հոկտեմբերի 9-ին վախճանվեց թողբեր բորբոքումից և պատշաճաւոր կարգով թաղվեց Եւֆրատ հայոց գերեզմանատանը: Անհրաժեշտ էմ համարում յայտնելու վերայիշեալը հանգուցեալի հեռաւոր ազգականներին և բարեկամներին, որոնք և տեղեկութիւններ տաւալու համար կարող են դիմել ինձ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիեննայից НОВОСТИ լրագրին հեռագրում են, որ հայկաթօլիկների պատրիարք Աղաբեան սպառնալի նամակներ ստացաւ հայկական կօմիտեից:

Վիեննայի «Polit. Correspondenz» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ արտաքին գործերի միմիայնութիւնը վաշխ-Գաղեան այս օրերս յայտնեց սուլթանին, թէ հայերին խաղաղացնելու նպատակով հարկաւոր է ազգային ժողով հրաւիրել հայ ազգաբնակչութեան ներկայացուցիչներից՝ նոր պատրիարք ընտրելու համար. բայց Բ. Կրան մի ուրիշ բարձր պաշտօնեայ՝ Նուրեան էֆէնդի, ազգային ժողով գումարելու դէմ խօսեց և խորհուրդ տուեց սուլթանին սպասել աւելի բարեխաջող հանգամանքներին՝ նոր պատրիարք նշանակելու համար: Թէ Արթին Գաղեան և թէ Նուրեան էֆէնդին ընդարձակ զեկուցումներ ներկայացրին սուլթանին, պարզ կերպով քայքայելով հայկական շարժման պատճառները, մի շարժում, որ ինչպէս բոլոր նշաններից երևում է, շուտ չի զաւարի:

Կ. Պոլսից «Berliner Tageblatt» լրագրին գրում են. «Էւուր է պտտում, որ տաս հայ յիշափոխականներ փախան թիւրքաց բանտից: Ոստիկանութիւնը մեծ եռանդով որոնում է փախուցիչներին: Փողոցներում, պատերի վրա, կայքված են պրօկլամացիաներ, որոնցով հրաւիրվում է ժողովուրդը օգնել ոստիկանութեան խողարկութիւններին և զուրկ չը կորցնել այն դէպքում, եթէ փախուցականներին բռնելու ժամանակ տեղի կունենան փողոցային անկարգութիւններ և խառնակութիւններ»:

St. James-Hall-ի միտինգի կազմակերպողները դիմեցին Վաղարշապետին՝ խնդրելով նրանից նամակ ուղարկել հայոց հարցի առիթով, որը պէտք է կարգաւելի միտինգում: Գաղափար պատասխանեց, թէ իր կարծիքները այդ հարցի մասին ամենեւին չեն փոխվել Լիվերպուլի վերջին միտինգի օրից, և այդ պատճառով ինքն չէ կարող չառ վերցնել ոչ մի խօսք, որ ասել է Լիվերպուլում:

«Բէյքերի գործակալութեան» անունով Կ. Պօլսի ամերիկական զեւտան Թերթլէ հեռագրել է Ունիթին, որ թիւրքաց կառավարութիւնը որոշեց թող տալ, որ Ամերիկա գաղթեն այն կանայք և երեխաները, որոնց ամուսինները կամ հայրերը զանազան են Ամերիկայում:

Մարտի 10-ը եղած այն հայ գաղթականները, որոնք եկել են Կ. Պօլսից վերջին անցքերից յետոյ, չարտնադրուած են ստանալ նորաստեղծ Անգլիայից: Նորաստեղծի բաշխման և օգնութեան ամբողջ գործի զխառնուրէն է տիկին Սօմերսոն:

«Central News» լրագրում տպւած է հետեւեալ հեռագիրը Կ. Պօլսից. «Հայ յեղափոխականների մի խումբ ուղարկեց Ֆրանսիական զեւտանին մի նոր նամակ, որով նրանք յայտարարում են, թէ որովհետեւ Եւրոպայի ուղադրութեան չափաւ հայերի արդարացի պահանջները, այդ պատճառով վերջինները մտադիր են այնպիսի ցոյց անել, որը իր չափերով կը գերազանցի մինչև այժմ եղած բոլոր ցոյցերին: Այդ նամակը պատուով էր ուղարկուած Ֆրանսիական զեւտանին:

«Թիւրքաց կառավարութիւնը գործակալութեան ամեն միջոցներ է ձեռք առնում Ոսթիկանութեանը և զօրքերին արդէն հրաման է տրուած յետ կանգնեցնել մահմետական ազգաբնակչութիւնը հայերին զորոյդ վարմունքներից, իսկ հայերին յայտարարուած է, որ եթէ խառնակութիւններ ամենամեծ զանգուշան փորձ անեն, խիստ պատժի կենթարկուին:

«Անտուրիայի բարձրագոյն կոմիտէի Շաբիր-փաշան ամեն կերպ աշխատում է իրագործել ընթերցանութիւնը, բայց նահանգների ֆինանսական պայմանները այնքան վատ են, որ նրա բոլոր ջանքերը ապարդիւն են անցնում փոխ պակասութեան պատճառով: Այն ժամանակից, որ ազգաբնակչութիւնը ընկել է յեղափոխական կոմիտեաների ազդեցութեան տակ, նա հարկեր չէ կամեցում վճարել: Այն իսկ, ընթերցանութիւնը համար նահանգապէս է ուժեղ տալ պաշտօնականներին, զարգացնել առևտրական յարաբերութիւնները՝ հաղորդակցութեան ճանապարհները բարեկարգելով և այլն: Կրթական փող է հարկաւոր, իսկ փող չը կայ գանձարանում: Ֆինանսները միմիայն Նազիֆ-փաշան հետեւեալ ֆինանսական սխտեմ հնարեց, որով բնութագր կարող է 3 միլիոնով կրճատել: Միացնելով այդ երեք միլիոնի սպիտակ և կէտի մի միասնականութեան եկամուտները, կարելի կը լինի վերականգնել ֆինանսական հաստատարչութիւնը:

Պարիզի «Soir» լրագիրը ասում է, որ Թիւրքիայի ֆինանսները տարախելի դրութեան մէջ են գտնուում: Մասնաւորութիւնից աղտոտելու համար, Թիւրքիային անհրաժեշտ է արտաքին փոխառութիւն անել: Բայց մի այդպիսի փոխառութիւն անելը անկարելի է, առանց եւրոպական պետութիւնների երաշխաւորութեան, որոնցից Անգլիան կարական կերպով հակառակ է փոխառութիւն անելուն: Թիւրքերը իրանց գրութիւնը յուսաճատական են համարում: Նրանք երկիրը լի սպասում են եւրոպական նաւատորմի բռնաբար մտնելուն և պատրաստուած են, այդ մասնելու րօպէին, բարուքանդ անել ս. Սֆիայի առճաբը, Բէրայի արուարձանը, և կոտորել բոլոր քրիստոնեաներին Ասիայում:

Բիրմինգհամից «Բէյքերի գործակալութեանը» հեռագրում է. «Տեղական զուգորդում պարզներն բաժանելու առիթով Գոչլի տակց, որ օտար ժողովուրդները հասկացողութիւն չունեն անգլիացիների իսկական բնաստութեան մասին, ի բաց չառնելով և կրթված գերմանացիներին: Այժմ հայերի օգտին սկսված մարդասիրական շարժումը արձագանք չը գտաւ Եւրոպայում, դրա պատճառը Գերմանիայի և Ֆրանսիայի զբոյշ ընթացքն է, որը պէտք է վերադառնա վերջին պատերազմի անցքերին, որի յիշատակը և ազդեցութիւնը ժողովրդական բնաստութեան վրա չը կարողացան ջնջել 20 տարիները: Չէ կարելի անկեղծ եւրոպական կոնգրէս կազմել, մինչև որ միջազգային նախապաշարմունքներին չը փոխարին անկեղծ համբարողութիւնը:

Լօնդոնից «Բէյքերի գործակալութեանը» հե-

ռագրում են. «Times» լրագիրը գրում է, որ անհատական կողմից սուլվածին պատճառած դժուարութիւններին մասնակցականները նոր դժուարութիւններ կաւելացնեն, որով կատաղացնեն ինքնամոլութեան նոր բռնկումն զէպի քրիստոնեաները և այնպէս կը ծանրացնեն պետութիւնների դրութիւնը, որ կարծես թէ Անգլիան միայնակ գործելիս լինէր: Յաւալի է, որ բանակցութիւնները Ռուսաստանի հետ առաջ չեն գնում ներկայումս, սակայն կարելի կը լինի ոչ պաշտօնապէս, բայց կտրական կերպով նախազգուշացնել սուլվածին պետութիւնների հայեացքների և ընդհանուր դիտարկութիւնների մասին:

Հոկտեմբերի 7-ին, Լօնդոնում, St. James-Hall-ում կայացաւ վաղուց սպասուած միտինգը՝ Թիւրքաց բռնութիւնների դէմ բազմաբնու նպատակով: Այդ ժողովը զանազանութեամբ էր նախընթաց «քաղաքային միտինգներից» նրանով, որ համազգային բնաստութիւն ունէր, որովհետեւ այդ ժողովին ներկայ էին պատգամաւորներ Միացեալ թագաւորութեան բոլոր մասերից, որոնց թւում զանազան քաղաքների 110 մերկ: Այդ միտինգը գումարված էր բոլորի ազգային կոմիտեի կողմից, որ գտնուում է Ռուստմիտ-տէրեան դքսի նախագահութեան տակ: Անգլիէի դահլիճը լի էր բազմաթիւ հանդիսականներով, որոնց մէջ կային զանազան քաղաքական գործիչներ, անգլիական եկեղեցու և ինքնագործարարների կողմից: Բարձր ներկայացուցիչներ, համալսարանի և լոբիի փոխ ղեկավարներ և պատգամաւորներ Մեծ-Բրիտանիայի զանազան հիմնարկութիւններից: Ժողովին նախագահում էր Բոչեստէրի եպիսկոպոսը: Նիստը բացվեց այն համակարգի նամակների ընթերցանութեամբ, որ ստացված էին պետական և հասարակական զանազան ներկայացուցիչներից, որոնք հնարաւորութիւն չունէին անձամբ ներկայ լինել միտինգին, դրանց մէջ Ռուստմիտտէրեան և Վէլինգտոնի զբաղից և ուրիշներ: Առանձին ոգևորութիւն պատճառեց Գաղատանի նամակը. «Ներկայ վայրկեանում մեր գլխաւոր նպատակը պէտք է լինի աջակցութիւն ցոյց տալ լոբի Սոլսբորիին (ծախահարութիւններ), որպէս զի կարելի լինի կոտորածների շարքը դադարեցնել: Իմ կարծիքով՝ հաւատացնել, որ մենք կը թըշնամացնենք մեզ հետ մէկ կամ մի քանի պետութիւններին, եթէ մենք պնդենք գաղութներով մեզ պատկանող իրաւունքների վրա՝ չը թող տալ սխտեմաբանական կոտորածները և ներկայացնենք երաշխաւորութիւն, որ մենք ի չարք չենք դրած զի պետութիւնների վտանգութիւնը չափաւորական նպատակներով, հաւատացնել այդ բանը նշանակում է տարօրինակ պարագիս առնել (ծախահարութիւններ), որ չէ արդարացում ոչ բանականութեամբ և ոչ էլ պատմութեամբ: Յայտնել առաջուց Մեծ Բրիտանիային, թէ մեր գործունէութիւնը կընդհատվի հենց այն կէտում, որը բաւարար է համարում դժուար համոզվող պետութիւններից մէկը, կը նշանակել, իմ կարծիքով, հրաժարել միաժամանակ թէ իր արժանաւորութիւնից և թէ խոհեմութիւնից: (Միաժամանակութեամբ):

Վերջապահութեան մէջ Գաղատան յայտնում է, որ իր երկարամիայ գործունէութիւնը միջոց է առել իրան կատարելագոյն համոզվելու, որ Թիւրքիայի բարբարոս ընթիւն գլխաւոր պատճառը այժմեան սուլվածն է: Հոկտեմբերի թըւում գտնուում էին Լօնդոնի քաղաքային խորհրդի նախագահ Արնօլը, Բէյքաստի լոբի-մէրը, Հէրէֆօրդեան եպիսկոպոսը և այլն:

«Բէյքերի գաղթականութեան շարժումը, ինչպէս գրում են Կ. Պօլսից, բուն մայրաքաղաքն սկսած, ամենէն ստատիկ հարուած տուաւ Թիւրք կառավարութեան, ոչ որ, առանց պատճառի, կը լքէ իր տունը տեղը և հողին առած, օտար երկիր կը դիմէ. «ապահով հողի վրա ապրել», այս է գաղթականութեան նպատակը, ու այն ժողովուրդը, որ Ասամիայի, խառնելով, Գաղթիայի և մայրաքաղաքին բոլոր մոլի անկեղծներուն մէջ տեսաւ հաղորատու անմեղներու զանքը, պիտի հեռանար, ի հարկէ: Կ. Պօլսից, զոր օսման հին հպարտութիւնը Տէր-Սաաթէ թ (Երջանկութեան դուռ) կոչած էր, հիմալ ճշմարիտ Տէր-Սէֆալէ թ (Թշուառութեան դուռ) մը դարձած է: Հիմալ կառավարութիւնը միջոցներ ձեռք առած է կասեցնել:

Լու համար գաղթականութեան հոսանքը: Բարթոլոմէոս եկեղեցիներուն մէջ և կառավարութիւնը թերթերուն մէջ կը քարոզեն, որ հայ ժողովուրդը պէտք չէ գաղթէ օտար երկիր, ուր չափ թշուառութեան մէջ են եղեր արդէն գաղթողները. «Ինչ կըսէք այս հոգեւորական: Թիւրք թերթերը ամեն օր հայոց ընտրած գաղթականութեան, Պոլսից, Յունաստան, Եգիպտոս, Մարսիլ, Ամերիկա և այլն, առաւելանալով գրութեան տխուր նկարագրութիւնները կընեն (1) այդ միջոցով իւր թէ վնասեցնելու համար ժողովուրդ մը, որ Թիւրքիայէն կը փախչի: Նոյն իսկ լրագիր մը, «Հէրէֆօրդ Եպիսկոպոս», որ չափ նշանաւոր է քաղաքի ձիւրքերով, գրեց, թէ Պոլսից կարող մէջ հայերը իրենց լեզուն և կրօնը կորսնցնելու վտանգին մէջ են (2): Ամեն պարագայի մէջ, ընդհանուր գաղթականութեան շարժումը բնական հետեւութիւն է տեղի ունեցած զէպերուն և չի կրնար կասիլ այս տեսակ միջոցներով:

ԳԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԱՐԴԵԼՔՆԵՐ

Կ. Պօլսի լրագիրների մէջ հետեւալ մանրամասնութիւններն են: Գտնում սուլվածին նորերս հրատարակած գաղթականութեան դէմ արդէնքեր յարուցանող իրադէի բովանդակութեան մասին:

«Իրաւի աւուր թուրք թերթերը օտար երկիր գաղթող հայոց նկատմամբ պաշտօնական զեկոյց մը հրատարակեցին, որով կը քարոզեն հետադարձ, «Գաղթիւ ուղղորդին ստիպեալ են այլ ևս օսման հետ երկիրները չը վերադառնալու ստորագրութիւն տալ երաշխաւորով և պատրիարքարանի վաւերացումով, նաև իրենց կենդանագրեցն երկիրը օրինակ՝ ձեռնհաս յանձնաժողովին: Այս պայմանաւ գաղթելու արժանացնելու տրուելու անցադին մէջ բացորոշապէս դրուելու է սա խօսքը թէ յետ այսորիկ պիտի չը վերադառնան օսման երկիրները: Նաև պէտք է, որ յատկապէս կազմուած յանձնաժողովին, կառավարական ձեռնհաս չըլնանալու և պատրիարքարանի առաւելներուն մէջ արձանագրել տան, թէ դադարած են օսման կառավարութեան հպատակ ըլլալ և թէ յետ այսորիկ պիտի չը վերադառնան օսման երկիրները: Իսկ առանց օսման կառավարութեան արտօնութիւն ստանալու գաղթողները, եթէ ներկայ ծանուցման թուականէն հաջորդող մէջ ու կէս և երբ բնաւոր արգելք մը պատահի՝ առ առաւել երկու ամսուան մէջ չը վերադառնան իրենց տեղերը, պարտին Եւրոպայի օսման հետ զեպանաւորները դիմել և ծանուցանել, թէ պիտի չը վերադառնան օսման երկիրները: Այս օրոշումները բնաւ վերաբերութիւն չունին անոնց, որ քսան տարի է ի վեր գաղթած են, մասնաւոր խոստարաններու և անոնց, որ անմահ յանձնապէս գաղթողներն են և խոստարանական ակումբի անդամներուն և խոստարանները վերադարձին թող պիտի չը տրուի: Եկող շարաւիտներն անմիջապէս պիտի բռնուին և ընդհանուր գաղթականներուն պիտի յանձնուին, որպէս զի օրինական գործողութիւններն կատարուին իրենց նկատմամբ: Գործելու, որովհետեւ չափ մը օտարահաւատակ հայեր կը գտնուին իրենց կազմակերպիչ յիշեալ շարաւիտներուն և խոստարանութեան և աստիկանութեան համար դժուար է զանաք զանապանել, օսման հաւատակութիւն ստանալ ուղղող օտարահաւատակներու խնդրագրերուն ընդունելութեան մասին գտնուած կանոնական թուականութիւնները պիտի չը գործադրուին: Այսպէս կը ծանուցուի ըստ կայսերական հրամանագրին, որ եււա նախարարական յատուկ ժողովի խնդրանքը:

«ԹԵՐԶԻՍՏԵՆԻ» ԹՅՈՒՆԱԾԸ

«Փունի» յօդուածը՝ սահմանադրութեան դէմ, որ Նուրեանի խորհրդով գրուած է, թարգմա-

նուցաւ բոլոր թիւրք թերթերու մէջ: Ասկէց զատ, «Թէրէֆանը» Հադիֆաթ՝ «Յանցաւորը ով է» վերնագրով յօդուած մը հրատարակեց, որուն մէջ յայտնի կը տեսնուէր Նուրեանին ժանկերը. «Թիւրք լրագիրը արդէն կը խոստովանի, թէ գրողը երեւելի հայ մըն է (1)»: Եւսա այդ յօդուածին իմաստը:

«Յանցաւորը ով հայ ժողովուրդն է, ով օտարազգի թեւադրիչներն են, և ով ալ «անխելք ու անկենցաղազէտ» պատրիարքն ու «անհեղափոխ և իմարական ընթացքի հետեւող» վարչութիւնն է, որովհետեւ չի կրնար ըսուիլ, թէ ամբողջ ազգ մը անխելք է, արտաքին թեւադրիչները ինչքան ալ փայլուն բաներ խոստանան չեն կրնար ամբողջ ազգ մը խաբել, մասնաւոր հայ ազգը, որ օտար ազդեցութիւններէ կը խորշի, ինչպէս կը վկայեն պատմութիւնը և կրօնքին զատութիւնը, այսպէս հայերու կրօնական արարողութիւնը ուրիշ քրիստոնեաներէ տարբեր է. պատրիարքը և քաղաքական ժողովի անդամները, որպիսի որ ալ ժողովուրդը սխալ ճամբէ տարին վերջերս, առանց ալ զուրկ են յեղափոխական գաղափարները խեղդելու ուժերէ: Միակ յանցաւորը ուրեմն ազգային սահմանադրութիւնն է, որ 24 տարեկան հայուն ըսէի և 30-ը լրացուցած հայուն երեալիսական ժողովի անդամացու թիւան իրաւունք կուտայ: Պատրիարքը 14 եկեղեցական և 14 աշխարհական անդամէ բաղկացած ժողովներու որոշումին պիտի հնազանդի և այս ժողովներն ալ երեսփոխանական ժողովի կողմէն պիտի ընտրուին: Այդ կանոնադրութեան համաձայն, 24 տարին լրացուցած երեսփոխարէ թաղական խորհրդի անդամ կընտրուի և առանց իրաւունք ունին թաղային, եկեղեցական և զբաղւորական գործերը վարելու, որոնց չեն կրնար միջամտել ըսանալները, պատրիարքը չի կրնար եկեղեցիներու քարոզիչներ և աւագներէցներ նշանակել, որոնք ըսանալից դասին և այդ խորհուրդներու որոշումով կընտրուին, պատրիարքը չի կրնար նոյնպէս զաւանդուն առաջնորդներ նշանակել, զաւանդական ժողովները կընտրուին և իր պաշտօնն է միայն զրկել, ու է պատասխանատուութիւն չի կայ և ամեն կապակցութիւն և յարաբերութիւն կտոր կտոր եղած է:

35 տարի է ի վեր այս միջակ կը շարունակէ, 7 պատրիարք յաջորդած են իրարու և ամենքն ալ կամ վոնդուած և կամ դժուարութիւններու հանդիպելով ըստուած են գործէն, անկարգութեան և մասնաւորապէս խոստարանութեան այսքան առաջ երթալուն բուն պատճառը այդ կանոնադրութիւնը եղած է: (1): Գարնանը. «Ներկայ առժամանակայ խառն ժողովը պետութեան հաւատարմի անձերէ բաղկացած ըլլալով, ընականաբար ազգին ալ օգտակար է (2)»: Պէտք է ժամանակ մը իր պաշտօնին վրա մնայ և կառավարութեան և ոստիկանութեան հետ համաձայնութեամբ, յանցաւորներուն խոստովանելու անմեղներուն զմոլթիւն (1) ցոյց տալով, գործերը վարէ: Միւս կողմէ, կառավարութիւնը յանձնաժողով մը կազմելով, պէտք է սահմանադրութիւնը դադարեցնէ և ընենու հրաման տայ, այս յանձնաժողովի անդամներուն կէսը կառավարութիւնը և միւս կէսը պատրիարքարանը նշանակելու է, անանկ կանոնադրութիւն մը կազմելու է, որ այս ազգին հին վարք ու բարքին, կրօնքին և օսման կառավարութեան պետական իրաւունքներուն համաձայն ըլլայ (2): Այս նոր կանոնադրութեան մէջ պէտք է որ ազգային ժողովին անդամ ընտրուող անձը կառուածի, հարատուութեան տէր և կառավարութեան վտանգութիւնը գրաւած ըլլայ, բոլոր պատասխանատուութիւնները ճշդուելու են, պատրիարքը թէ մայրաքաղաքին մէջ և թէ գաւառները պէտք է բացարձակ ազդեցութիւն վայելէ և առաջնորդներ կարենայ գրկել միայն իր կոնդակով և կառավարութեան ֆէրմանով: Եթէ առանց այս արագադրութիւնները տեղի ունենալու նոր պատրիարք և վարչութիւն ընտրելու հրաման տրուի, «յետինն չար բան դառալին» կըլլայ, անկարգութեան առջնը չառնուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Եղաւ-Լօտարինգիայում այս օրերս խոշոր անկարգութիւններ են տեղի ունեցել նորակոչ զինուորների ձեռնով: Գերմանական լրագիրները աշխատում են պատասխանատուութիւնը դրել ֆրանսուսական տօնախմբութիւնների վրա:

